Սրնգենի (*Philadelphus* L.) ցեղը պատկանում է Դրախտավարդազգիների (*Hydrangeaceae*) ընտանիքին: Տարբեր գրական աղբյուրների համաձայն՝ ցեղն ընդգրկում է 50-70 տեսակներ, որոնք բնականորեն տարածված են Հյուսիսային Ամերիկայում, Արևմտյան Եվրոպայում, Արևելյան Ասիայում և Հեռավոր Արևելքում: Նախկին ԽՍՀՄ-ում բնակաւորեն աճում են 2 տեսակներ, այդ թվում 1-ը՝ Կովկասում, մյուս 2-ը՝ Հեռավոր Արևելքում [9, 14, 16, 17, 20, 33, 34]:

Ռուսաստանում Կովկասի լեռնային անտառների ստորոտում, հանդիպում են կովկասյան (*Ph. caucasicus* Kohn) և պսակավոր (*Ph. coronarius* L.) սրնգենիները: Հեռավոր Արևելքի անտառներում՝ Ամուր գետի ավազանում, տարածված են սրատերև (*Ph. tenuifolius* Rupr. Et Maxim) և Շրենկի (*Ph. Schrenkii* Rupr. et Maxim) տեսակները: Սրնգենու հարուստ տեսակային բազմազանություն է հանդիպում Հյուսիսային Ամերիկայում և Հիմնաստանում: Վերջինիս վայրի տեսակների դասական ձևերը համարվում են Հյուսիսային Ամերիկայի բուսական աշխարհի ներկայացուցիչներ՝ ս. Անհոտ (*Ph. inodorus* L.), ս. կալիֆոռնիական (*Ph. californicus* Benth), ս. մանրատերև (*Ph. microphyllus* Gray.), ս. փափկամազ (*Ph. pubescens* Loisel) և այլն [16, 25, 26]:

Աշխարհագրական տարածվածությամբ սրնգենին ունի անհամեմատ մեծ արեալ [29]: Նրա աշխարհագրական տարածման վերլուծությունը ցույց է տալիս, որ համաշխարհային գենոֆոնդը կազմող տեսակների մեծամասնությունը հանդիպում են Հյուսիսային Ամերիկայում (40), այնուհետև՝ Հիմնաստանում (22): Անհամեմատ աղքատ են Արևմտյան Եվրոպան (5), Հեռավոր Արևելքը (4), Միջին Ասիան (2), Ճապոնիան (2), Հիմալայները (1) և Կովկասը (1), [15, 16, 17, 32, 34, 35]: Հայաստանում բնականորեն աճում է միայն կովկասյան սրնգենին (*Ph. caucasicus* Koehne): Հանդիպում է հյուսիսարևելյան շրջաններում՝ կաղնու, հաճարենու, բոխու ստորին անտառային գոտիներում և թփուտներում [10,28]:

Կ. Լիննեյի ժամանակներից ի վեր սրնգենին դարձել է մշակության մեջ լայնորեն կիրառվող բուսատեսակ: Նախալիննեյան գրականության մեջ այն հանդես է եկել որպես *Syringa* Tournefort, *Frutex coronaries* Clusius կամ *Philadelphus Arthenaci et Rivinii*: Շվեյցարացի կենսաբան, բնագետ Բաուհինն առաջինն էր, ով մեկնաբանեց նախալիննեյան “*Syringa alba*”-ն՝ որպես հունարեն *Philadelphus*: Զլիֆորդի և Ուփսալայի այգիներում գտնվող թարմ նյութից Լիննեյը տեղեկություններ է հավաքել սրնգենու պսակավոր (*Ph. coronaries*) տեսակի մասին: Դատելով Լիննեյի հերքարիումում պահպանված նյութերից, Նա ճիշտ է որոշել այն որպես *Frutex coronaries* Clusius [32, 34]:

R.W. Chaney (1939) և C. Condit (1944) հաստատել են միջին միոցենում երկրակեղևի նստվածքային ապարներում սրնգենու բրածո մնացորդների առկայությունը:

Հայտնաբերվել է տերևների նմանությունը բրածո *Ph. nevadensis* (Knowlton) Chaney և ԱՄՆ-ի հյուսիս-արևմուտքում հանդիպող *Ph. lewisii* Pursh տեսակների միջև [32]:

Սրնգենին մշակության մեջ է մտցվել XII-XIII դարերում Կենտրոնական Ամերիկայում, Փոքր Ասիայում և Արևելյան Ասիայում: Ռուսաստանում XVI-XVII դարերում այդ բույսերը տարածված էին թագավորական պարտեզներում: Եվրոպայում ամերիկյան և ասիական ծագմամբ սրնգենիները հայտնաբերվել են XIX դարի առաջին կեսերին [2]:

1792 թ.-ին պսակավոր սրնգենին (*Ph. coronarius* L.) ներմուծվել և կլիմայավարժեցվել է Հյուսիսային Ամերիկայի բարեխառն գոտիներ: XIX-XX դարերում տեսակների մեծամասնությունը հայտնվել է եվրոպական բուսաբանական այգիներում [18]: Նախկին ԽՍՀՄ-ում դեռևս 1738 թ. օտարածին սրնգենիներից ներմուծվել են անհոտ (*Ph. inodorus* L.), այլուհետև (1800 թ.) լայնատերև տեսակները (*Ph. latifolius* Schrad) և հետագայում Նաև դրա ոչ այնքան ցրտադիմացկուն *Ph. latifolius* x *P. coronarius* (*Ph. nivalis* Jaques), *Ph. latifolius* x *iaxus* (*Ph. pendulifolius* Carr.) հիբրիդային ձևերը [17]:

1920 թ.-ի վերջին տաքսոնոմիայից բացի բուսաբանական այլ հետազոտություններ ընդլայնեցին սրնգենու մասին գիտելիքները: 1929 թ.-ին Բանգհեմը հրատարակեց իր ուսումնասիրությունների արդյունքները սրնգենի ցեղի բոմոսոմային կազմի մասին [32]:

Սրնգենու սելեկցիոն աշխատանքները նպատակաուղղված կոմպակտ, երկար ու առատ ծաղկող, լիաթերթ ծաղիկներով թփեր ստանալու ուղղությամբ տարվել են XIX դարի վերջերից սկսած: Ֆրանսիացի սելեկցիոներ Վիկտոր Լեմոնը 1884-1927 թթ. ներմուծել և նկարագրել է մեծ քանակությամբ տեսակներ, ստեղծել միջտեսակային հիբրիդներ և սորտեր: Նրան պատկանող ընկերությունը ստացել է մոտ 40-50 սորտեր և մեծ քանակությամբ հիբրիդներ [17, 25, 36]: Սրնգենու սելեկցիոն աշխատանքներում մեծ ներդրում ունի Նաև ռուս սելեկցիոներ Ն.Կ. Վեխովը, ով, իր աշխատանքն իրականացնելով Լիպեցկի անտառային փորձակայանում, 1930-1940-ական թվականներին ստեղծել է չորադիմացկուն և ցրտադիմացկուն սրնգենիների նոր հիբրիդային ձևեր [2, 11, 18]:

Հայաստանում օտարածին սրնգենիների ուղղությամբ առաջին աշխատանքները կապված են Երևանի, այլուհետև Վանաձորի և Սևանի բուսաբանական այգիների, ինչպես նաև տարբեր դենդրոպարկերի ստեղծման հետ, քանի որ Հայաստանի բուսաբանական այգիներն ու դենդրոպարկերն իրենց երկարատև գործունեության ընթացքում զբաղվել են հյուսիսային կիսագնդի բարեխառն գոտու տարբեր բուսաաշխարհագրական տարածաշրջաններից տնտեսապես արժեքավոր և բարձր գեղազարդ ծառաբույսերի ներմուծմամբ և կլիմայավարժեցմամբ, ինչպես նաև դրանց կանաչապատման պրակտիկայում ներդնելու խնդիրներով:

Երևան քաղաքի և Նրա մերձակա կանաչ տնկարկներում օգտագործել են մեծ քանակությամբ ծառատեսակներ, մինչդեռ բարձր գեղազարդ, հատկապես գեղեցիկ ծաղկող թփերի օգտագործմանը քիչ ուշադրություն է դարձվել: Ելնելով դրանից՝ վերջին 2 տասնամյակների ընթացքում բուսաբանական այգու ծառագետ մասնագետները նպատակ են ունեցել ՀՀ բուսաբանական այգիներում ստեղծել գեղեցիկ ծաղկող թփերի հարուստ հավաքածու, ուսումնասիրելու դրանց կենսաբանական առանձնահատկությունները, բացահայտելու Երևանի խիստ ցամաքային կլիմայական պայմաններին հարմարվողականությունը և առավել դիմացկուն ու լավագույն հատկություններով օժտված տեսակները ներդնելու կանաչ տնկարկների տեսակաշարում: Այդպիսի բարձր գեղազարդ և գեղեցիկ ծաղկող թփատեսակների շարքում կարևորվել է Նաև սրնգենին, որի հարուստ տաքսոնոմիական կազմն ու Էկոլոգիական ճկունությունը, ինչպես նաև ընդգրկուն աշխարհագրական տարածվածությունը հնարավորություն են տվել դիտարկելու այն՝ որպես արժեքավոր ու հեռանկարային ելանյութ, Հայաստանի բազմազան դենդրոկլիմայական պայմաններում ներմուծելու համար: Գրական տվյալները ցույց են տալիս, որ 1940-ական թվականներից ներմուծման տարբեր օջախներում փորձարկվել են սրնգենու տարբեր տեսակներ [1, 23, 30, 31]: Երևանի բուսաբանական այգում 1985-1990-ական թվականներին շուրջ 1200 անուն ընդգրկող դենդրոհավաքածուների կազմում ներկայացված են եղել *Philadelphus* ցեղին պատկանող 28 տեսակներ, 7 հիբրիդներ, 3 սորտեր, 2 մշակության մեջ հանդիպող բույսեր [5, 27]:

Այսպիսով, սրնգենի ցեղի (*Philadelphus* L.) համաշխարհային գենոֆորի և բուսաշխարհագրական տարածվածության վերլուծությամբ բացահայտված է, որ երկրագնդի բարեխառն գոտու տարբեր տարածաշրջաններում հանդիպում է շուրջ 70 տեսակ: Ընդ որում տեսակային մեծ բազմազանությամբ հարուստ են Հյուսիսային Ամերիկան և Հիսաստանը: Հայաստանի բուսաբանական այգիներում և դենդրոպարկերում մինչ այժմ ներմուծվել և կլիմայավարժեցվել են մոտ 40 տեսակի բարձր գեղազարդ սրնգենիներ, որոնց զգալի մասը տարբեր պատճառներով անցած 2-3 տասնամյակների ընթացքում շարքից դուրս են եկել [աղ. 1]:

Աղյուսակ 1. *Philadelphus* L. Ցեղի հիմնական ներկայացուցիչների աշխարհագրական տարածվածությունն ու ներմուծված տեսակների ներկայացվածությունը ՀՀ բուսաբանական այգիներում և դենդրոպարկերում

Տեսակ	Աշխարհագրական տարածվածությունը							Առկայությունը					Ներմուծված տեսակներ
								Բուսաբանական այգիներում			Դեռողրոպարկերում		
								Հյուսիսային Ամերիկա	Արևելյան Ասիա	Միջին Ասիա	Եվրոպա	Հեռավոր Արևելք	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
<i>Philadelphus affinis</i> Schtdl.	+												
<i>Ph. argyrocalyx</i> Wooton	+												
<i>Ph. asperifolius</i> Kocm.	+												
<i>Ph. austromexicanus</i> S.Y. Hu	+												
<i>Ph. bifidus</i> (C.L.Hitchc.) S.Y.Hu	+												
<i>Ph. brachybotrys</i> Koehne		+										+	
<i>Ph. californicus</i> Bent.	+							+					+
<i>Ph. caucasicus</i> Koehne						+		+	+	+	+	+	+
<i>Ph. caudatus</i> S. M. Hwang		+											
<i>Ph. confusus</i> Piper	+												
<i>Ph. cordifolius</i> Lange	+							+					+
<i>Ph. coronarius</i> L.				+				+	+	+	+	+	+
<i>Ph. coulteri</i> S. Watson	+							+					+
<i>Ph. crinitus</i> (C. L. Hitchc) S.Y.Hu	+												
<i>Ph. dasycalyx</i> (Rehder) S.Y. Hu		+											
<i>Ph. Delavayi</i> L. Henry		+											
<i>Ph. Ernestii</i> S.Y.Hu	+												
<i>Ph. floribundus</i> Schrad.				+	+			+	+	+			+
<i>Ph. Gattingeri</i> S.Y.Hu	+												
<i>Ph. glabripetalus</i> S.Y.Hu		+											
<i>Philadelphus gordonianus</i> Lindl.	+							+	+	+			+
<i>Ph. grandiflorus</i> Willd.	+							+	+	+		+	+
<i>Ph. Henryi</i> Koehne		+								+			+
<i>Ph. hirsutus</i> Nutt.	+	+						+					
<i>Ph. hitchcockianus</i> S.Y. Hu	+												
<i>Ph. incanus</i> Koehne		+						+		+		+	+
<i>Ph. inodorus</i> L.	+												
<i>Ph. insignis</i> Carr.	+												
<i>Ph. kansuensis</i> (Rehder) S.Y. Hu		+											
<i>Ph. karwinskyanus</i> Koehne	+												
<i>Ph. kunmingensis</i> S.M. Hwang		+											
<i>Ph. latifolius</i> Schrad.	+							+	+	+		+	+
<i>Ph. laxiflorus</i> Rehder		+											
<i>Ph. lewisii</i> Pursh	+							+	+	+			+

Ժ.Յ. ՎԱՐԴԱՆՅԱՆ, Ա.Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
<i>Ph. lushuiensis</i> T.C.Ku & S.M. Hwang		+											
<i>Ph. maculatus</i> (C. L. Hitchc.) S.Y.Hu	+												
<i>Ph. madrensis</i> Hemsl.	+												
<i>Ph. Magdalenae</i> Koehne		+						+		+		+	+
<i>Ph. mearnsii</i> W.H.Evans ex Rydb	+												
<i>Ph. mexicanus</i> Schltdl.	+							+					+
<i>Ph. microphyllus</i> A. Gray.	+							+		+		+	+
<i>Ph. myrtoides</i> Bertol.	+												
<i>Ph. nepalensis</i> Koehne			+	+				+		+			+
<i>Ph. oblongifolius</i> S. Y. Hu	+												
<i>Ph. occidentalis</i> A. Nelson	+												
<i>Ph. oreganus</i> Nutt ex Torr.Gray	+												
<i>Ph. osmanthus</i> S. Y. Hu	+												
<i>Ph. pallidus</i> Hayek		+		+						+			+
<i>Ph. palmeri</i> Rydb.	+												
<i>Ph. pekinensis</i> Rupr.		+	+	+				+					+
<i>Ph. Pringleri</i> S. Y. Hu	+												
<i>Ph. pubescens</i> Loisel.	+												
<i>Ph. pueblanus</i> S.Y. Hu	+												
<i>Ph. purpurascens</i> (Koehne)Rehder		+			+			+		+			+
<i>Ph. reevesianus</i> S. Y. Hu		+											
<i>Ph. sargentianus</i> S. Y. Hu	+												
<i>Ph. satsumanus</i> Miq.		+						+		+		+	+
<i>Ph. Schrenkii</i> Rupr.		+			+			+	+			+	+
<i>Ph. sericanthus</i> Koehne		+						+	+	+			+
<i>Ph. serpyllifolius</i> A. Gray	+												
<i>Ph. subcanus</i> Koehne		+						+					+
<i>Ph. tenuifolius</i> Rupr. Et Max.		+			+			+		+			+
<i>Philadelphus tetragonus</i> S. M. Hwang		+											
<i>Ph. texensis</i> S. Y. Hu	+												
<i>Ph. tomentosus</i> Wall. Ex G. Don		+					+	+		+	+		+
<i>Ph. tsianschanensis</i> Wang et Li		+											
<i>Ph. verrucosus</i> Schrad.	+							+				+	+
<i>Ph. Wootonii</i> S. Y. Hu	+												
<i>Ph. Zeyheri</i> Schrad.	+							+					+
<i>Ph. zhejiangensis</i> S. M. Hwang		+											

Չնայած այն հանգամանքին, որ սրնգենի ցեղի ներմուծման և կլիմայավարժեցման հետ կապված բավականին աշխատանք է կատարվել, ու հավաքված հետաքրքիր հավաքածուից որոշ տեսակներ փաթթված աճել, առատ ծաղկել ու պտղաբերել են մեր հանրապետության հյուսիսային՝ Վանաձորի, Ստեփանավանի, Արմավիրի մարզում, այնուամենայնիվ հանրապետության կանաչ տնկարկները ներկայացնող զեղազարդ բույսերի տեսակաշարում սրնգենիներն ըստ բազմաձևության անհրաժեշտ ուշադրության չեն արժանացել: Հանրապետության բուսաբանական այգիներում և դենդրոպարկներում կենտրոնացված է ցեղի հետաքրքիր տեսակների հավաքածու՝ ներմուծված տարբեր ֆլորիստիկ մարզերից, այնինչ կանաչապատման պրակտիկայում օգտագործվել է հիմնականում 2 տեսակ՝ ս. կովկասյան (*Ph. caucasicus* Koehne) և ս. պասկավոր (*Ph. coronarius* L.), [6-8, 21]: Նշված տեսակներից կանաչապատ տարածքներում համեմատաբար շատ տարածում ունեն պասկավոր սրնգենին և նրա հիբրիդային ձևերը: Դրանք լայնորեն օգտագործվում են կանաչապատման պրակտիկայում, խմբերով կամ որպես սոլիտեր ծաղկապարտեզային ձևավորումներում: Ուստի հարկ ենք համարում ավելի մանրամասն կանգ առնել այս երկու տեսակների կենսատվոլոգիական որոշ առանձնահատկությունների վրա:

Կովկասյան սրնգենին (*Ph. caucasicus* Kochne) Հայաստանում բնականորեն աճող տերևաթափ, մինչև 3 մ բարձրությամբ միակ տեսակն է: Տերևները երկարավուն են, էլիպսաձև, սրածայր, ատամնաեզր: Ծաղիկները սպիտակավուն են, խոշոր, հաճելի հոտով: Պտուղը չոր, անկյունավոր տուփիկ է: Ծաղկում է մայիս, հունիս ամիսներին:

Բնականորեն տարածված է Կովկասում և Փոքր Ասիայում: Հայաստանում հանդիպում է հյուսիսային շրջաններում, կաղնու, հաճարենու, բոխու ենթանտառներում, թփուտներում ծ.մ մինչև 1000-1500 մ բարձրության սահմաններում: Աչքի է ընկնում բավարար լուսասիրությամբ և չորադիմացկունությամբ, հողի նկատմամբ քիչ պահանջկոտ է [10]:

Ինչպես արդեն նշվեց, հանրապետության կանաչապատման պրակտիկայում օգտագործվում է ներմուծված մեկ այլ տեսակ՝ պսակավոր սրնգենին (*Ph. coronarius* L.), որը նույնպես աչքի է ընկնում բարձր գեղագարդությամբ ու բազմաթիվ պարտիզային ձևերի առկայությամբ: Տերևաթափ թուփ է մինչև 3մ բարձրությամբ: Ընձյուղները մերկ են, երիտասարդ տարիքում՝ մազմզուկապատ: Հին ճյուղերի կեղևը դարչնագորշավուն է, ճաքճեղ: Տերևները ձվաձև են կամ երկարավուն ձվաձև, սրածայր գագաթով, լայն սեպաձև կամ կլորավուն հիմքով, ատամնաեզր, վերևից՝ մերկ, ներքևից՝ փնջավոր, ջղերի անկյուններում՝ աղվամազապատ: Ծաղիկները սպիտակավուն են, չափազանց բուրուճմամբ, ձվաձև պսակաթերթիկներով, հավաքված 5-9-ական ողկուզանման ծաղկաբույլերում: Ծաղկակիրը և բաժակաթերթիկները մերկ են կամ մազմզուկապատ, սնակը սերտաճած է իր մեծ մասով: Ծաղկում է հունիսին, պտղաբերում է օգոստոսին: Բնական պայմաններում աճում է Արևմտյան Եվրոպայում: Հայաստանում մշակվում է ամենուրեք, կովկասյան սրնգենու հետ միասին: Ունի բազմաթիվ պարտիզային ձևեր, որոնք տարբերվում են բարձրությամբ (ցածր աճ, բարձր), ծաղիկների լիաթերթիկությամբ, տերևների գույնով (ոսկեդեղին, սպիտակ երիզավոր), տերևների ձևով (նեղ նշտարաձև) և այլն: Չափազանց արժեքավոր դեկորատիվ թուփ է [15, 16]:

Սրնգենիների մեծամասնությունը լավ է աճում բավարար խոնավ հողերում, գրունտային ջրերի առկայության պայմաններում: Դիմանում են քաղաքների և արդյունաբերական ձեռնարկությունների շրջակայքի օդի աղտոտվածությանը, դրա համար էլ միայնակ, խմբերով կամ կենդանի ցանկապատ ստեղծելու համար օգտագործվում են կանաչապատման ոլորտում: Ծաղկում են մայիս, հունիս ամիսներին մոտ 30 օր տևողությամբ: Մեղրատու են, ծաղիկներն օգտագործվում են ծաղկային ձևավորման, ինչպես նաև պարֆյումերիայի արտադրության մեջ: Բազմանում են սերմերով, թփի բաժանմամբ, կտրոններով, արմատային մացառներով [17]:

Սրնգենու համար աճի բավարար պայմաններ կան նաև Երևանի բուսաբանական այգում, որտեղ տեղումների տարեկան քանակությունն ընդամենը 300-350 մմ է, ամառը շոգ ու չոր է, ձմեռը՝ ցուրտ, հողը՝ փոքր հզորության և ամրության: Այդ մասին են փաստում 1985 թ.-ի գրականության մեջ առկա տվյալները, ըստ որի՝ Երևանի բուսաբանական այգու պայմաններում փորձարկվել են սրնգենու շուրջ 23 տեսակներ, որոնց սերմերը ստացել են Նախկին ԽՍՀՄ-ի և արտասահմանյան երկրների տարբեր բուսաբանական այգիներից: Կատարված փորձերի արդյունքում ստացվել են բավականին բարձր ցուցանիշներ կլիմայավարժեցման ասպարեզում մյուս բուսաբանական այգիների տվյալների հետ համեմատած: Այստեղից հետևություն է արվել, որ կլիմայավարժեցման պրոցեսը պայմանավորված է ոչ թե տարբեր ցեղերից ներմուծված սերմերի ու տվյալ տեսակի աշխարհագրական ծագմամբ, այլ տվյալ ցեղի Էկոլոգիական առանձնահատկությամբ [21]:

Գեղեցիկ ծաղկող թփերի ներմուծումն այլ ֆլորիստիկ շրջաններից կամ նրանց կլիմայավարժեցումը հնարավոր է, եթե տվյալ տեսակի Էկոլոգիական պահանջը համապատասխանում է աճման նոր պայմաններին: Այդ տեսակետից կլիմայավարժեցման մեծ հնարավորություն է ցուցաբերել սրնգենին: Տարբեր տարածաշրջաններից ներմուծված սրնգենիներն ընդհանուր առմամբ մեր պայմաններում աչքի են ընկնում չորադիմացկունությամբ, ցրտադիմացկունությամբ, ծաղկում և պտղաբերում են առատ, սերմերը լրիվ ծլունակ են, կտրոնները դաշտային պայմաններում արմատակալում են հեշտությամբ և արագաճ են: Այս հանգամանքներից ելնելով՝ կարելի է եզրակացնել, որ սրնգենու Էկոլոգիական պահանջը համապատասխանում է մեր հանրապետության հողակլիմայական պայմաններին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Ազարյան В.А.* Деревья и кустарники Севанского ботанического сада, перспективные для озеленения и облесения высокогорных районов Армянской ССР. Бюл. бот. сада АН Арм. ССР, №21, с. 31-74, 1966.
2. *Александрова М.С.* Аристократы сада: красивоцветущие кустарники. М., ЗАО “Фитон+”, 192 с., 1999.
3. *Аксёнов Е.С. Аксёнова Н.А.* Декоративные растения: деревья и кустарники. М., ООО “Изд-во АСТ”, 1, 560 с., 2000.
4. *Алексеев Ю.Е., Жмылев П.Ю., Карпухина Е.А.* Деревья и кустарники: энциклопедия природы России. М., 1997, 592 с.
5. Аннотированный каталог деревьев и кустарников ботанических садов и дендропарков Армянской ССР. Бюлл. бот. сада АН Арм. ССР, №27, 164с., 1985.
6. *Арутюнян Л.В.* Древесные экзоты Еревана. Бюл. бот. сада АН Арм. ССР, №18, с.5-33, 1961.
7. *Арутюнян Л.В.* Принципы озеленения улиц Еревана. Бюл. бот. сада АН Арм ССР, №18, с. 69-86, 1961.
8. *Бозоян А.А.* Деревья и кустарники зеленого кольца Еревана. Бюлл. Бот. сада АН Арм. ССР, №28, с. 49-57, 1985.
9. *Булыгин Н.Е., Ярмишко В.Т.* Дендрология, СПб, Наука, 528 с., 2000.
10. *Варданян Ж.А.* Деревья и кустарники Армении в природе и культуре. Ер., 367с., 2003.
11. *Вехов Н.К.* Жасмин. М., Московский рабочий, 56с., 1952.
12. *Григорян Л.М.* Коллекция жимолостей в ботанических садах и дендропарках Армении. Изв. с.-х наук Ер., 7-12, с. 229-335, 1994.
13. *Гроздов Б.В.* Декоративные кустарники. М., изд-во “Стройиздат”, 135 с., 1964.
14. *Гроздова Н.Б. Некрасов В.И. Глоба-Михайленко Д.А.* Деревья, кустарники и лианы. М., Лесная пром-ть, 349 с., 1986.
15. Деревья и кустарники: справочник. Киев, Изд-во “Наукова думка”, 624 с., 1974.
16. Дендрофлора кавказа, Тбилиси, с. 223-233, 1963.
17. Деревья и кустарники СССР, М., Л., 3, с.137-150, 1954.
18. *Казарова С.Ю.* Белоснежные чубушники: наука и жизнь. М., № 6, с. 102-110, 2014.
19. *Колесников А.И.* Декоративная дендрология. М., Лесн. пром-ть, 700 с., 1974.
20. *Коропачинский, И.Ю. Встовская Т.Н.* Древесные растения Азиатской России. Новосибирск: Изд-во СО РАН, 707 с., 2002.
21. *Лавчян Э.К.* Интродукция красивоцветущих кустарников в Ереванском ботаническом саду. Бюлл. Бот. сада АН Арм ССР, № 26, с. 51-60, 1985.
22. *Лавчян Э.К.* Коллекция сиреней в Ереванском ботаническом саду. Бюлл. бот. сада АН Арм. ССР, 25, с.65-73, 1979.
23. *Махатадзе Л.Б.* Результаты интродукции древесных и кустарниковых пород в Кироваканском отделении Ботанического сада за 1937-1946г.г. Бюл. бот. сада, №6, с. 5-23, 1948.
24. *Мурадян Н.Н.* Интродуцированные представители таволги (*Spiraea* L.) в Армении. Ботаническая наука в современном мире, Ереван, с. 366-371, 2015.
25. *Пенезева Н.* Лъёт жасмин благоуханье. Цветоводство, 2009, № 3.,с. 16-19
26. *Рубцов Л.И.* Деревья и кустарники в ландшафтной архитектуре. Справочник. Киев, Изд-во “Наукова думка”, 272 с., 1977.
27. *Саядян М.Л.* Коллекция растений. Иджеванский субтропический дендрологический парк. Ванадзор, 204с., 2010.
28. *Сосновский Д.И., Махатадзе Л. Б.,* Краткий определитель деревьев и кустарников Арм. ССР, Ер. 102с., 1950.
29. *Черепанов С.К.* Сосудистые растения России и сопредельных государств. СПб., Мир и семья, 992 с., 1995.

30. Ярошенко Г.Д., Григорян Е.А., Лавчян Э. К. Результаты интродукции древесно-кустарниковых растений в Ереванском ботаническом саду. Бюлл. бот. сада АН Арм. ССР, №13, с.43-49. 1953.
31. Ярошенко Г.Д., Навасардян О.А., Григорян Е.А. Результаты интродукции некоторых древесно-кустарниковых пород в Ереванском ботаническом саду. Бюл. бот. сада АН Арм. ССР, №10, с. 5-15, 1951.
32. Hu S. A Monograph of the Genus Philadelphus / S. Hu // Harvard university: Arnold Arboretum, 35, p. 275-333, 1954.
33. Hufford L. Hydrangeaceae / L. Hufford . The families and genera of vascular plants / ed. by K. Kubitzki., N.Y., Springer, 6, p. 202-215, 2004.
34. Shaw N. Philadelphus L. mock orange / N. Shaw, Hurd E., Stickney P. The woody plant seed manual / USDA: Agriculture Handbook, 727, p. 786-789, 2008.
35. Wyman D. The best Philadelphus / D. Wyman // Arnold arboretum, Harvard university: Bulletin of popular information, series 4. IV, 10, p. 55-62, 1936.
36. Wyman D. The mock-oranges / D. Wyman // Arnoldia: A continuation of the Bulletin of popular information of the Arnold arboretum, Harvard university, 25, 5, p. 29-36, 1965.

Ստացվել է 05.02.2021



Հայաստանի կենսաբ. հանդես, 1 (73), 2021

ՈԱԴԻՈՆՈԿԼԻԴՆԵՐԻ ԿՈՒՏԱԿՈՄԸ ՄԻ ԶԱՆԻ ԳԵՂԱԶԱՐԴ ԾԱՌԵՐԻ ՏՆԿԻՆԵՐԻ ՏԵՐԵՎՆԵՐՈՒՄ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԻ ԵՎ ԴԻԼԻՋԱՆԻ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԳՈՏՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Լ.Մ. ՂԱԼԱԶՅԱՆ, Ա.Յ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ, Ա.Յ. ՀՈՎՍԵԹՅԱՆ, Ա.Ա.
ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ, Ս.Ա. ԷԼՈՅԱՆ, Ա.Ս. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱՎ Գ.Ս.Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ
lauraghalachyan@yahoo.com.

Ուսումնասիրվել են գումարային β -ռադիոակտիվության առանձնահատկությունները և վերահսկվող տեխնածին ռադիոնուկլիդների (^{90}Sr ($T_{1/2}=28,6$ տարի), ^{137}Cs ($T_{1/2}=30,1$ տարի) կուտակումը ՀԴԻ-ի տարածքի (Հայկական ԱԷԿ-ի (ՀԱԷԿ) 30 կմ շառավղով գոտի) և Դիլիջանի անտառային փորձակայանի ջուր-հող-բույս, սննդալուծույթ-բույս էկոհամակարգերում: Պարզվել է, որ արևելյան կենսածառի տնկիների տերևները գումարային β -ռադիոակտիվությամբ գերազանցել են կաղնու, սոսու, գիհու, մորինգայի նույնատիպ օբյեկտներին: Ուստի, գեղազարդ փշատերև արևելյան կենսածառը՝ որպես ՌՆ-ի բնական կուտակիչ, առաջարկվում է կիրառել կանաչ շինարարության մեջ՝ կանաչ գոտիների, պուրակների, անտառների ստեղծման համար:

Տնկիներ – ջուր-հող-բույս – տեխնածին ՌՆ – գումարային β -ռադիոակտիվություն – գործնական առաջարկ

Исследовались особенности суммарной β -радиоактивности и накопления контролируемых техногенных радионуклидов (РН): ^{90}Sr ($T_{1/2}=28,6$ года) и ^{137}Cs ($T_{1/2}=30,1$ года) в экосистемах вода-почва-растение, питательный раствор-растение в окрестностях ИПГ (зона Армянской АЭС (ААЭС) радиусом 30 км) и Дилижанской лесной опытной станции. Выяснилось, что листья саженцев восточной туи, по суммарной β -радиоактивности, превосходили аналогичные объекты дуба, платана, можжевельника, моринги. Поэтому декоративную хвойную восточную тую, как естественный накопитель РН, рекомендуется применять в зеленом строительстве для создания зеленых зон, скверов, лесов.

Саженьцы – вода-почва-растение – техногенные РН – суммарная β -радиоактивность – практическая рекомендация

The specificities of total β -radioactivity and accumulation of controlled technogenic radionuclides (RN) ^{90}Sr ($T_{1/2}=28,6$ years) and ^{137}Cs ($T_{1/2}=30,1$ years) have been studied in the water-soil-plant and nutrition solution-plant ecosystems of the IHP (the zone of Armenian Nuclear Power Plant (ANPP) with 30 km radius) and Dilijan forest experimental station. It was revealed that leaves of oriental thuja's saplings prevail the similar objects of oak, plane tree, juniper and moringa by the total β -radioactivity. Therefore, ornamental coniferous oriental thuja is proposed to be used in the green building As a natural accumulator of RN to create green zones, public gardens and forests.

Saplings – water-soil-plant – technogenic RN – total β -radioactivity – practical recommendations

Հայտնի է, որ անտառային բուսահամակցություններն ուրիշ Էկոհամակարգերի համեմատ ընդունակ են կուտակելու ավելի մեծ քանակով ռադիոնուկլիդներ (ՌՆ): Մթնոլորտից անտառի վրա թափված ՌՆ-ի 40-90 %-ը կարող են պահել ծառերի սաղարթները: Այնուհետև մթնոլորտային տեղումների, քամու և թափվող տերևների միջոցով ՌՆ-ը (90 %) տեղաշարժվում են դեպի հողի մակերես: Ընդ որում ՌՆ պահելու ամենամեծ ընդունակությունն ունեն փշատերև ծառերը: Փշատերև անտառում ՌՆ-ի տեղաշարժը տևում է 3-5, իսկ լայնատերևում՝ 1 տարի: Հաշվարկված է, որ 1 տարվա ընթացքում 1 հա անտառը, կախված ծառատեսակից, կարող է օդից հեռացնել մինչև 50-70 տ ռադիոակտիվ փոշի: Այսինքն՝ անտառի Էկոլոգիական ամենակարևոր նշանակությունն այն է, որ վերջինս կենսատերկրաքիմիական արգելք է կենսոլորտում ՌՆ-ի տարածման և տեղաշարժման համար [3, 5, 6, 8, 10-12, 15, 16]:

Հայաստանն աղքատ է անտառներով, դրանք կազմում են հանրապետության տարածքի մոտ 11,2 %-ը կամ 334,1 հազ հա: Ընդ որում Հայաստանը պատկանում է չոր կլիմա ունեցող երկրների թվին, որտեղ անտառների ինքնավերականգնման հնարավորությունը ծայրահեղ ցածր է: Ուստի, ատոմակայան ունեցող Հայաստանի (Հայկական ԱԷԿ-ը /ՅԱԷԿ/ տեղակայված է Արարատյան դաշտում, շահագործվել է 1976-1989թթ., վերաշահագործվել է 1995թ.) համար առաջնահերթ խնդիրներ են անտառների, քաղաքների կանաչ գոտիների ու պուրակների վերականգնումը և ընդլայնումը:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ ռադիոէկոլոգիապես առավել նպաստավոր ծառատեսակի բացահայտման նպատակով մեր կողմից ուսումնասիրվել են գումարային β-ռադիոակտիվության և վերահսկվող տեխնածին ՌՆ-ի՝ ^{90}Sr ($T_{1/2}=28,6$ տարի), ^{137}Cs ($T_{1/2}=30,1$ տարի) կուտակման առանձնահատկությունները ՀՀ-ի տարածքի և Դիլիջանի անտառային փորձակայանի (ԴԱՓԿ) ջուր-հող-բույս, սննդալուծույթ-բույս Էկոհամակարգերում: Սա ունի գործնական նշանակություն, քանի որ ռադիոէկոլոգիապես առավել նպաստավոր ծառատեսակի կիրառումը կանաչ գոտիների, անտառների, պուրակների ստեղծման համար կունենա բնապահպանական նշանակություն:

Նյութ և մեթոդ: Հետազոտություններն իրականացվել են 2017-2020թթ. Արարատյան դաշտում (ք. Երևան, ՀՀ-ի տարածք) և ԴԱՓԿ-ում: Արարատյան դաշտը գտնվում է ծովի մակերևույթից մոտ 850-900 մ բարձրության վրա, շրջապատված է հարավ-արևմուտքից և հարավից՝ Մեծ և Փոքր Արարատներով, հյուսիս-արևմուտքից՝ Արագած լեռով և հյուսիս-արևելքից՝ Ուրցի և Գեղամա լեռնաշղթաներով: Հարկ է նշել, որ այդ տարածաշրջանում կլիման խիստ ցամաքային է, տարեկան միջին ջերմաստիճանը 11,0-11,8°C է, հարաբերական խոնավությունը՝ 40 %, տեղումների տարեկան միջին գումարը՝ 200-300 մմ: ՀՀ-ի շրջակա հողերը կիսաանապատային են, ջրով, կարբոնատային, որում հումուսը կազմել է 1,5-2,5 %, հարուստ է ֆոսֆորով և կալիումով: ԴԱՓԿ-ն գտնվում է Դիլիջան քաղաքի մոտ՝ ծովի մակերևույթից 1400-1500 մ բարձրության վրա: Տարեկան միջին ջերմաստիճանը 8,1°C է, տեղումների քանակը տարեկան կազմում է 660-750 մմ: ԴԱՓԿ-ի անտառային դարչնագույն հողերի վերին հորիզոնում հումուսը կազմում է 9,0-9,3 %, այդ հողերը հարուստ են կալիումով, աղքատ են ազոտով և ֆոսֆորով [2, 4]: Հիդրոպոնիկայում ծառերի տնկիները սնուցվել են Գ.Ս. Դավթյանի կողմից առաջարկված սննդալուծույթով [9]: Սննդալուծույթի պատրաստման համար որպես ելային ջուր ՀՀ-ի տարածքում կիրառվել է արտեզյան ջուր, իսկ ԴԱՓԿ-ում՝ ծորակի ջուր: Որպես լցանյութ կիրառվել են նախօրոք KMnO_4 -ի 0,05 %-ոց լուծույթով ախտահանված, 3-15 մմ տրամագծով մասնիկներ ունեցող գլաբարը, հրաբխային խարամը և դրանց խառնուրդը (1:1, ըստ ծավալի):

Հետազոտությունների համար փորձամուշներ են վերցվել արտեզյան և ԴԱՓԿ-ի ծորակի ջրերից, սննդալուծույթից, 0-30 սմ հաստությամբ հողաշերտերից, մի շարք գեղազարդ ծառերի տնկիների (կաղնի՝ *Quercus* L., սոսի արևելյան՝ *Platanus orientalis* L., գիհի վիրգիլյան՝ *Juniperus virginiana* L., կենսածառ արևելյան՝ *Biota orientalis* Endl., մորինգա յուղատու՝ *Moringa oleifera* Lam., պավլովնիա՝ *Paulownia*) տերևներից: Փորձամուշներում ՌՆ-ի (^{90}Sr , ^{137}Cs) պարունակությունը և գումարային β-ռադիոակտիվությունը որոշվել են ռադիոքիմիական մեթոդներով փոքր ֆոնային ՄՄՓ-1500 ռադիոմետրի միջոցով [14]: Ստացված տվյալները համեմատվել են սահմանաթույլատրելի խտությունների (ՍԹԽ) հետ [1, 10, 13]: Գիտափորձերի արդյունքում ստացված տվյալները ենթարկվել են վիճակագրական մշակման GraphPad Prism 6-ի միջոցով:

Արդյունքներ և քննարկում: ԴԱՓԿ-ն գտնվում է առատ տեղումների գոտում, և անտառի վրա ՌՆ-ի թափվելը ծառերի մեջ դրանց ներթափանցման հիմնական ուղին է: Կարելի է ենթադրել, որ ԴԱՓԿ-ում ծառերի տնկիները ՌՆ կլանել են օդային ավազանից մթնոլորտային տեղումներ-տերևներ և մթնոլորտային տեղումներ-տերևներ-հող-բույսի

արմատ շղթաների միջոցով, իսկ Արարատյան դաշտում՝ օդային ավազանից վերգետնյա զանգվածի և ոռոգիչ ջուր-հող-բույսի արմատ շղթայի միջոցով: Ե՞վ Արարատյան դաշտում, և՞ Դիլիջանի անտառային գոտում, բացօթյա հիդրոպոնիկայի պայմաններում ծառերի մեջ ՌՆ-ը ներթափանցել են միաժամանակ օդային ավազանից և սննդալուծույթից (աղ. 1):

Աղյուսակ 1.

^{90}Sr -ի և ^{137}Cs -ի պարունակությունը ԶՊԻ-ի տարածքի և ԴԱՓԿ-ի բնական ջրերում, սննդալուծությունում, հողերում

Նմուշառման տեղը	Նմուշի տեսակը	^{90}Sr	^{137}Cs
		Բք/լ, Բք/կգ*	Բք/կգ*
ԶՊԻ-ի տարածք	արտեզյան ջուր	$0,044 \pm 0,002$	$0,003 \pm 0,0001$
	սննդալուծույթ	$0,44 \pm 0,030$	$0,030 \pm 0,001$
	գորշ, մշակովի հող*	$6,9^* \pm 0,27$	$8,0^* \pm 0,25$
ԴԱՓԿ-ի տարածք	ծորակի ջուր	$0,037 \pm 0,002$	$0,002 \pm 0,0001$
	անտառային դարձնազույն հող*	$11,9^* \pm 0,30$	$7,0^* \pm 20$
Սթն [1, 10, 13]	խմելու ջրում	5,0	11,0
	հողում*	55,0*	185,0*

ԶՊԻ-ն գտնվում է ԶԱԷԿ-ի տեխնածին ազդեցության 30 կմ շառավղով գոտում, իսկ ԴԱՓԿ-ն՝ ԶԱԷԿ-ից մոտ 3,5 անգամ ավելի հեռու: Ուստի, ռադիոէկոլոգիական առումով ուշագրավ է այդ գոտիների բնական ջրերի, հողերի, ծառաբույսերի տերևների ռադիոակտիվության համեմատությունը: Պարզվել է, որ արտեզյան ջուրը ^{90}Sr -ի և ^{137}Cs -ի պարունակությամբ գերազանցել է (1,2 և 1,5 անգամ) ԴԱՓԿ-ի ծորակի ջրին (աղ. 1):

Աղյուսակ 2.

Գեղագարդ ծառերի տնկիների տերևների գումարային β -ռադիոակտիվությունը հիդրոպոնիկ և հողային մշակությամբ, ԶՊԻ-ի տարածքում և ԴԱՓԿ-ում

Նմուշառման տեղը	Ծառի անվանումը	Մշակության եղանակը	Գումարային β -ռադիո-ակտիվությունը, Բք/կգ
ԶՊԻ-ի տարածք	Կենսածառ արևելյան	հիդրոպոնիկ	320 ± 26
		հող	210 ± 26
	գիհի վիդգիսյան	հիդրոպոնիկ	240 ± 22
		հող	180 ± 22
	Կաղնի	հիդրոպոնիկ	180 ± 22
		հող	160 ± 20
	Մորինգա յուղատու	հիդրոպոնիկ	250 ± 22
		հող	140 ± 22
	սոսի արևելյան	հիդրոպոնիկ	260 ± 22
		հիդրոպոնիկ	300 ± 20
ԴԱՓԿ-ի տարածք	Կենսածառ արևելյան	հող	200 ± 22
		հող	190 ± 22
	Կաղնի	հող	140 ± 26
		հիդրոպոնիկ	180 ± 20
	սոսի արևելյան	հիդրոպոնիկ	210 ± 22
		հիդրոպոնիկ	210 ± 22

Հայտնի է, որ բնական ջրերում ՌՆ-ից գերակշռում է ^{90}Sr -ը [7], որը պայմանավորված է վերջինիս մեծ շարժունակությամբ: Արտեզյան և ԴԱՓԿ-ի ծորակի ջրերում $^{90}\text{Sr}/^{137}\text{Cs}$ հարաբերությունը կազմել է 14,7, 18,5՝ համապատասխանաբար, ինչը նույնպես վկայում է այդ մասին: Պարզվել է, որ ԶՊԻ-ի շրջակա հողերում գերակշռել է ^{137}Cs -ի, իսկ ԴԱՓԿ-ի հողերում՝ ^{90}Sr -ի պարունակությունը (աղ. 1): ԶՊԻ-ի տարածքի ծառերը տերևների գումարային β -ռադիոակտիվությամբ 1,1-1,3 անգամ գերազանցել են Դիլիջանի անտառի ծառերին (աղ. 2):

Ըստ երևույթին, սա վկայում է կենսոլորտի վրա ՅԱԷԿ-ի տեխնածին բացասական ազդեցության մասին: Թե՛ ԴԱՓԿ-ում և թե՛ ՅՊԻ-ի տարածքում առանձին ծառատեսակների տերևները կուտակել են տարբեր քանակության ՌՆ, թեև մշակվել են միևնույն հողակլիմայական և ռադիոէկոլոգիական լարվածության պայմաններում: Հավանաբար, դա պայմանավորված է բազմաթիվ տարաբնույթ գործոնների միաժամանակյա համատեղ ազդեցությամբ, մասնավորապես ծառատեսակների կենսաբանական առանձնահատկություններով:

Գրականության տվյալները վկայում են, որ փշատերև եղևնին և սոճին բնափայտում ^{90}Sr -ի, ^{137}Cs -ի պարունակությամբ գերազանցում են կաղնուն [8, 16]: Մեր կողմից ստացված տվյալները համընկնում են վերոհիշյալի հետ: ՅՊԻ-ի տարածքում հիդրոպոնիկայում արևելյան կենսածառի փշատերևները գումարային β -ռադիոակտիվությամբ գերազանցել են սոսու, մորինգայի, գիհու, կաղնու տերևներին՝ 1,2, 1,3, 1,3, 1,8, իսկ հողում՝ գիհու, կաղնու տերևներին՝ 1,2, 1,3 անգամ՝ համապատասխանաբար (աղ. 2): Էկոլոգիական առումով կենսածառն ունի նաև ուրիշ առավելություններ լայնատերևավոր ծառերի համեմատ. ֆոտոսինթեզ է կատարում նույնիսկ ձմռանը, 1,5 անգամ ավելի փոշի է կլանում, արտադրում է ֆիտոնցիդներ, հողում փոքրացնում է ^{137}Cs -ի տեղաշարժը [3, 10]: Այսինքն՝ Էկոլոգիական առումով կանաչ գոտիների, պուրակների ստեղծման համար կենսածառն ավելի նախընտրելի է, քան լայնատերևավոր ծառերը:

Ըստ գրականության տվյալների՝ պավլովսիան հայտնի է որպես Էկոլոգիապես առավել նպաստավոր ծառաբույս, իսկ յուղատու մորինգան՝ որպես արժեքավոր դեղաբույս, որի տերևներն օժտված են ռադիոպաշտպան հատկությամբ [6, 17-21]: Ըստ մեր կողմից ստացված տվյալների՝ պավլովսիայի տերևները գումարային β -ռադիոակտիվությամբ հիդրոպոնիկայում և հողում գերազանցել են (բացառությամբ կենսածառի) մորինգայի, կաղնու, գիհու տերևներին 1,2 և 1,4, 1,7 և 1,2, 1,2 և 1,1 անգամ՝ համապատասխանաբար (աղ. 2):

Բացահայտվել է, որ հիդրոպոնիկ ծառաբույսերը գերազանցել են հողային պայմաններում աճեցված ծառաբույսերին տերևներում կուտակած ՌՆ-ի քանակով՝ մորինգան՝ 1,8, կենսածառը և պավլովսիան՝ 1,5, գիհին՝ 1,3, կաղնին՝ 1,1 անգամ (աղ. 2): Հայտնի է, որ ՌՆ-ից ամենամեծ β -ռադիոակտիվություն ունի բնական ռադիոնուկլիդ ^{40}K -ը [5]: Ուստի, կարելի է ենթադրել, որ հողում մշակված ծառաբույսերի տերևների համեմատությամբ հիդրոպոնիկ ծառերի տերևներում կալիումի (^{40}K) պարունակությունն ավելի բարձր է եղել, ինչի հետևանքով գումարային β -ռադիոակտիվությունը նույնպես բարձր է:

Գործնական առաջարկ: Գեղազարդ փշատերև ներմուծված ծառատեսակ արևելյան կենսածառը՝ որպես ՌՆ-ի բնական կուտակիչ, առաջարկվում է կիրառել կանաչ գոտիների, պուրակների, անտառների ստեղծման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի գործունեության հաշվետվություն, 2014թ.
www.anra.am/upload/Annu.
2. Վալեյանս Լ.Վ. /Խմբ./ Հայաստանի ազգային ատլաս, Ա հատոր, Երևան, 232 էջ, 2007:
3. Վարդանյան Օ.Հ. Ծառագիտություն, Երևան, Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, 370 էջ, 2005:
4. Бабаян Г.Б. Почвы и природные условия Дилижанской лесной агрохимической станции (ДИЛАС), Сообщения Института агрохимических проблем и гидропоники, 21, с. 21-25, 1980.
5. Бадрутдинов О.Р., Тюменев Р.С., Шуралев Э.А., Мукминов М.Н. Радиоактивность экосистем. Казань: Казан. ун-т, 201с., 2017.

6. Бикиров Ш.Б., Нуркасымова Э.А. Павловния войлочная в Кыргызстане и перспективы ее разведения. В кн.: Лесные экосистемы бореальной зоны: биоразнообразие, биоэкономика, экологические риски. Материалы Всероссийской конференции с международным участием. Красноярск, 26-31 августа 2019 г. Красноярск: ИЛ СО РАН, с. 49-51, 2019.
7. Бутаев А.М., Абдулаева А.С., Гуруев М.А. Радиоактивность природных вод и искусственные радионуклиды в объектах биосферы Дагестана. Вестник Дагестанского научного центра, 24, с. 62-69, 2006.
8. Воскресенская О.Л., Лейкин А.В., Воскресенский В.С., Сазонов А.Р. Накопление и распределение радионуклидов в органах туи западной, произрастающей в условиях городской среды. Вестник Марийского государственного университета, 8, с. 39-42, 2012.
9. Давтян Г.С. Гидропоника. В кн.: Справочная книга по химизации сельского хозяйства. М., Колос, с. 382-385, 1980.
10. Липатов Д.Н., Щеглов А.И. Пространственное варьирование коэффициентов квазидиффузии ^{137}Cs в лесных почвах в дальней зоне загрязнения от Чернобыльской АЭС. Радиационная биология. Радиоэкология, 54, 4, с. 537-462, 2014.
11. Мешурова Т.А., Аксенова В.М. Радиационный контроль сельхозпродукции в Пермском крае. Радиационная биология. Радиоэкология, 54, 5, с. 547, 2014.
12. Молчанова И.В., Михайловская Л.Н., Позолотина В.Н., Антонова Е.В. Техногенные радионуклиды в почвах Восточно-Уральского радиоактивного следа и их накопление растениями различных таксономических групп. Радиационная биология. Радиоэкология, 54, 1, с. 77-84, 2014.
13. Нормы радиационной безопасности (НРБ-99): Гигиенические нормативы. М., Центр санитарно-эпидемиологического нормирования гигиенической сертификации и экспертизы Минздрава России. М., 116 с., 1999.
14. Павлюк Ф.И. Методы определения ^{90}Sr и других изотопов. В кн.: Физико-химические методы исследования почв. М., 126 с., 1966.
15. Переволоцкий А.Н., Гончаров Е.А., Переволоцкая Т.В. К вопросу о моделировании распределения радионуклидов в лесных биогеоценозах. Радиационная биология. Радиоэкология, 6, с. 655-663, 2016.
16. Щеглов А.И., Цветнова О.Б. Биологический круговорот Cs-137 и K-40 в дубравах и агрофитоценозах на темно-серых лесных почвах Тульской области России. Радиационная биология. Радиоэкология, издательство Наука (М.), 57, 2, с. 201-209, DOI, 2017.
17. Bin-Meferij M.M., El-kott A.F. The radioprotective effects of *Moringa oleifera* against mobile phone electromagnetic radiation-induced infertility in rats. International Journal of Clinical and Experimental Medicine. 8(8), pp.12487-12497, 2015.
18. Birendra Kumar Paikra, Hemant kumar J. Dhongade, and Bina Gidwani. Phytochemistry and Pharmacology of *Moringa oleifera* Lam. J. Pharmacopuncture. Sep; 20, 3, pp. 194-200, 2017. Published online 2017 Sep 30. doi:10.3831/KPI.2017.20.022.
19. Fatma A.M. Hassan, A. K. Enab, Mona A.M. Abdel-Gawad, Hala M. Bayoumi and Y. B. Youssef Utilization of *Moringa oleifera* Leaves Powder in Production of Soft White Cheese. International Journal of Dairy Science, 12, pp. 137-142. DOI:10.3923/ijds. 137.142, 2017.
20. Karim N.A., Ibrahim M.D., Kntayya S.B., Rukayadi Y, Hamid H.A., Razis A.F. *Moringa oleifera* Lam: Targeting Chemoprevention. Revista Brasileira de Farmacognosia 27, Issue 5, September-October, pp.569-575, 2017.
21. Minaiyan M, Asghari G, Taheri D, Saeidi M, Nasr-Esfahani S. Anti-inflammatory effect of *Moringa oleifera* Lam. seeds on acetic acid-induced acute colitis in rats. Asian Pac J Cancer Prev.; 17, 8, pp.3675-86, 2016.



Հայաստանի կենսաբ. հանդես, 1 (73), 2021

ԱՆՄՆԱՑՈՐԴ ՆՎԻՐՈՒՄ ԳԻՏՈՒԹՅԱՆԸ (պրոֆեսոր Արմեն Թռչունյանի հիշատակին)



Հայաստանի Հանրապետության գիտակրթական համակարգը ծանր կորուստ կրեց: 2020 թվականի նոյեմբերին կյանքից վաղաժամ հեռացավ ԵՊՀ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արմեն Համբարձումի Թռչունյանը: Պրոֆեսոր Արմեն Թռչունյանը ֆիզիկաքիմիական կենսաբանության, մանրէաբանության, կենսատեխնոլոգիայի ոլորտների խոշոր գիտնական էր, ում համբավը տասնամյակներ առաջ արդեն տարածված էր Հայաստանի սահմաններից դուրս:

Արմեն Համբարձումի Թռչունյանը ծնվել է 1956 թվականին Երևանում, մտավորականի ընտանիքում: Գերազանց առաջադիմությամբ ավարտել է միջնակարգը, այնուհետև նույնպես գերազանց առաջադիմությամբ՝ նաև ԵՊՀ

կենսաֆիզիկայի բաժինը, ընդունվել ասպիրանտուրա, պաշտպանել թեկնածուականատենախոսությունը և սկսել աշխատել կենսաֆիզիկայի ամբիոնում՝ որպես գիտաշխատող: Բավական երիտասարդ տարիքում՝ 33 տարեկանում, պաշտպանել է դոկտորական ատենախոսությունը և շարունակել իր գիտական գործունեությունը կենսաֆիզիկայի ամբիոնում՝ որպես գիտաշխատող՝ գործուղվելով և գիտահետազոտական աշխատանք կատարելով, դասախոսություններով հանդես գալով ԱՄՆ-ի, Ճապոնիայի, Անգլիայի, Գերմանիայի և այլ երկրների առաջնակարգ գիտակրթական կենտրոններում: 1993 թվականից Արմեն Թռչունյանը կենսաֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր էր:

2001-2002 թվականներին նա աշխատանքի է անցնում որպես ՀՀ ԿԳՆ գիտության և գիտամանկավարժական կադրերի պատրաստման վարչության պետ, իսկ 2002-2010 թվականներին՝ ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի նախագահ: Այս տասնամյակն արժանահիշատակ է այն առումով, որ այդ տարիներին դրսևորվեցին Արմեն Թռչունյանի գիտակազմակերպչական լուրջ ունակությունները՝ իրականացնելով պատասխանատու վարչարարական աշխատանքներ նախարարությունում, նա ոչ միայն չիզեց կապը հարազատ ամբիոնի հետ, այլև շարունակում էր դասավանդել համալսարանում և միաժամանակ հաջողությամբ ղեկավարել կենսաֆիզիկայի ամբիոնի գիտահետազոտական լաբորատորիայում գործող իր գիտական խումբը, անում էր ամեն ինչ, որպեսզի խմբի գիտաշխատողները չիջեցնեն հետազոտությունների ինտենսիվությունը:

Վերադառնալով հարազատ համալսարան՝ նա 2011 թվականից ղեկավարում է մանրէաբանության, բույսերի և մանրէների կենսատեխնոլոգիայի ամբիոնը, այնուհետև ֆակուլտետի երկու ամբիոնների միացման արդյունքում ընտրվում է կենսաքիմիայի,

մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի միացյալ ամբիոնի վարիչ, որտեղ աշխատում է մինչև կյանքի վերջը:

Արմեն Թադևոսյանը 2015թ.-ից զբաղեցնում է նաև ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում գործող կենսաբանության գ/հ ինստիտուտի մանրէաբանության, կենսա-էներգետիկայի և կենսատեխնոլոգիայի գիտական լաբորատորիայի ղեկավարի պաշտոնը:

Արմեն Թադևոսյանը խոշոր գիտնական էր, գիտակրթական գործունեության հմուտ կազմակերպիչ, զարմանալի և աներևակայելի բարձր արդյունավետություն ունեցող մասնագետ: Իր ավելի քան 40-ամյա գիտակրթական գործունեության ընթացքում 700-ից ավելի հրատարակությունների հեղինակ էր, դրանց թվում՝ գիտական հոդվածներ, գիտաժողովների նյութեր, թեզիսներ, մենագրություններ, ինչպես նաև բուհական և դպրոցական դասագրքեր ու ձեռնարկներ: Արժանահիշատակն այն է, որ գիտական հոդվածների մեծամասնությունը հրատարակված է արտասահմանյան բարձր գիտական վարկանիշ ունեցող ամսագրերում: Այս չափանիշով Արմեն Թադևոսյանը հայաստանցի բնագետ-գիտնականների առաջատարն էր վերջին տասնամյակում, ինչում կարելի է համոզվել՝ ծանոթանալով ՀՀ ԳԱԱ անդամների տարեկան հակիրճ հաշվետվություններին:

Նա ստեղծել է գիտության մեջ ուրույն ավանդույթներով դպրոց: Ամսագրորդ Նվիրումով կրթել է բազմաթիվ երիտասարդների, կյանքի կոչել մանրէաբանության, կենսաբանության, կենսատեխնոլոգիայի, կենսաֆիզիկայի բնագավառներում տեղական և միջազգային նշանակության գիտակրթական բազմաթիվ նախագծեր: Պրոֆեսոր Թադևոսյանի խորհրդատվությամբ և ղեկավարությամբ մոտ երեք տասնյակ մասնագետներ պաշտպանել են դոկտորական և թեկնածուական ատենախոսություններ: Նա անդամակցել է տեղական և միջազգային բազմաթիվ գիտական ընկերությունների, հանդիսացել է հեղինակավոր միջազգային ամսագրերի խմբագրական կոլեգիաների անդամ:

Պրոֆեսոր Թադևոսյանի գիտակրթական գործունեությունն ըստ արժանվույն գնահատվել է թե Հայաստանում, և թե նրա սահմաններից դուրս: Այսպես, 2003 թվականին նա արժանացել է բնագիտության ասպարեզում ՀՀ նախագահի մրցանակին, 2006 թվականին ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 2019-ին արժանացել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պրոֆեսոր Թադևոսյանն արժանացել է նաև Հայաստանի ԿԳ նախարարության, Հայաստանի վեց բուհերի և այլ կազմակերպությունների մոտ մեկ տասնյակ ոսկե մեդալների և հուշամեդալների: Առանձնապես տպավորիչ են պրոֆեսոր Թադևոսյանի ստացած արտասահմանյան պարգևները, որոնք նույնպես բազմաթիվ են և վկայում են միջազգային գիտական հանրության պրոֆեսոր Թադևոսյանի բարձր հեղինակության մասին: Դրանց թվում են՝ Ջրածնի էներգիայի միջազգային ասոցիացիայի «Ակնառու ծառայությունների համար» մրցանակը (2014թ.), Ամերիկայի կենսագրական ինստիտուտի Գերազանցության գիտական մրցանակը (2011թ.), Ամերիկայի մանրէաբանության ընկերության «Մոգելիո Շեխտերի անվան մրցանակը»՝ մանրէաբանական գիտության, կրթության և տեխնոլոգիաների առաջընթացին նպաստելու համար, Ամերիկայի մանրէաբանության ընկերության մրցանակը՝ գիտական կադրերի ղեկավարման համար (2011թ.): Արժանացել է նաև բազմաթիվ շքանշանների՝ Միխայիլ Լոմոնոսովի (Ռուսաստան, 2007թ.), Պատվո հաչի (Գերմանիա, 2004թ.), բազմաթիվ մեդալների՝ Ռոբերտ Կոխի (2011թ.), Խաչատուր Աբովյանի (2010թ.), Ռուսաստանի հայերի միության հոբելյանական (2010թ.), Մարշալ Բադրամյանի (2009թ.), Վլադիմիր Նեդոսկու (2008թ.), Ռուդոլֆ Վիրխովի (2003թ.), ակադեմիկոս Սիսակյանի (2007թ.) և այլն:

Զափազանց ծավալուն է և բազմաբովանդակ պրոֆեսոր Արմեն Թադևոսյանի գիտակրթական գործունեությունը: Նա կարողացավ գիտական լուրջ հաջողությունների հասնել՝ դառնալով իր ոլորտի միջազգային լայն ճանաչում ունեցող գիտնական: Պատահական չէ, որ նրա վաղաժամ մահը ուշադրության արժանացավ նաև արտասահմանում. նշեմ մասնավորապես մահախոսականները “FEMS Microbiology Letters” ամսագրում, ինչպես նաև “Hydrogen Energy” ամսագրում, որտեղ բարձր գնահատական է տրվում նրա գիտակրթական գործունեությանը, “...he was a big man for science making it public...”, ասվում է երկրորդ մահախոսականում, այնուհետև եզրափակելով, որ «Արմեն Թադևոսյանը ընդմիջտ կմնա մեր հիշողություններում որպես էներգիայով լի,

կենսախիղ, խստապահանջ գիտական մոտեցումներ ունեցող մարդ, ում անխոնջ և անշահախնդիր ջանքերն ուղղված էին դեպի գիտության զարգացում...»։ Հիրավի, ճշգրիտ գնահատական։ Ավելացնեմ նաև, որ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի միջնորդությունը, ՀՀ Նախագահի հրամանագրով գիտության և կրթության բնագավառներում ներդրած ավանդի և երկարամյա անձնուրաց աշխատանքի համար պրոֆեսոր Արմեն Թռչունյանը հետմահու պարգևատրվեց հայրենիքին մատուցած ծառայությունների համար 1-ին աստիճանի մեդալով։

Արմեն Թռչունյանը երջանիկ էր նաև ընտանիքում՝ գերազանց ամուսին և գերազանց հայր։ Նրա որդին՝ Կարեն Թռչունյանը, գիտությունների երիտասարդ գոկտոր է և իր հոր արժանի հետևորդը։ Ներկայումս փոխարինում է Արմեն Թռչունյանին՝ ղեկավարելով ամբիոնը և գիտական լաբորատորիան։ Հուսով եմ, որ նա ամբիոնի և գիտական լաբորատորիայի խոստումնալից մասնագետների հետ միասին կշարունակի հոր ավանդույթները՝ ցուցաբերելով աշխատասիրություն, նպատակասլացություն, խոր գիտելիքներ, պատասխանատվության մեծ զգացում՝ այն ամենը, ինչն առավել բնորոշ էր Արմեն Համբարձումի Թռչունյանին։

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի ղեկան՝

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Է.Ս.Գևորգյան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏ» -ի
էլեկտրոնային տարբերակը
և հեղինակների համար կանոնները զետեղված են հետևյալ կայքէջում

<https://www.flib.sci.am/index.php/databases/#bibliography>

Խմբագրության աշխատակիցներ՝
Ափինյան Ն.Հ., Սահակյան Ա.Լ., Սարգսյան Է.Գ.
Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պ. 24 գ. սենյակ 11,
Հեռ. 010 58 01 97; 010 57 21 19, E-mail: bja@ysu.am

Сотрудники редакции:
Апинян Н.А., Саакян А.Л., Саркисян Э.Г.
Адрес редакции: 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24 г, комната 11,
Тел. 010 58 01 97; 010 57 21 19, E-mail: bja@ysu.am

Staff of Editorial office:
Apinyan N.H., Sahakyan A.L., Sargsyan E.G.
Address of Editorial office: 0019, Yerevan, Marshal Baghramyan pr. 24 g, room 11,
Tel. 010 58 01 97; 010 57 21 19, E-mail: bja@ysu.am

Հրատ. պատվեր՝ N 1081
Ստորագրված է տպագրության՝ 19.03.2021:
Թուղթը՝ օֆսեր. № 1:
6 տպ.մամուլ: Տպաքանակ՝ 150:
ՀՀ ԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան:
0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պ. 24: